«Շտիգեն» ՍՊԸ
0069, Հայաստան, Երևան,
Դ. Անհաղթ 23, 6-րդ տարածք
Հեռ. +374 11 23 00 23
Կայք. www.shtigen.com

Shtigen LLC
23, 6th area D. Anhaght
Yerevan, Armenia, 0069
Tel: +374 11 23 00 23
Web: www.shtigen.com

ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տեղադրված արևային ջրատաքացուցիչի համար համաձայն Պայմանագրի գործում է երաշխիքային սպասարկում՝ հետևյալ պայմաններով.

1. Ապրանքի համար գործում է երաշխիքային ժամկետ՝ 5 (հինգ) տարի, որը գործում է Մատակարարի կողմից տրամադրված շահագործման կանոնների պահպանման դեպքում և ներառում է՝
   - էլեկտրամագնիսական և հետադարձ փականի նորոգում,
   - վնասված սենսորի փոխարինում,
   - կառավարման վահանակի նորոգում,
   - կոլբաների գործարանային թերության շտկում,
   - բաքի գործարանային թերության շտկում,
   - խողովակաշարի ոչ մեխանիկական ազդեցությամբ առաջացած թերության շտկում:
2. Արևային ջրատաքացուցիչի անվճար երաշխիքային սպասարկման ժամկետը 5 (հինգ) տարի է, երաշխիքային ժամկետը սպառվելուց հետո Պատվիրատուն պարտավորվում է վճարում կատարել իրականացրած աշխատանքների և/կամ մատակարարված համակցման դետալների համար, որի համար Մատակարարի և Պատվիրատուի միջև կնքվում է սպասարկման աշխատանքների կատարման պայմանագիր:

Անվճար երաշխիքային սպասարկումը չի գործում հետևալ կցամասերի համար (եթե առկա են և տեղադրվել են Մատակարարի կողմից)՝

1. Տաք և սառը ջրի պոմպ
2. Եռաքայլ փական
3. Եռաքայլ խառնիչ

Ապրանքի համար երաշխիքային սպասարկումը չի ներառում հետևյալ դեպքերը՝

1. ջրի կոշտության արդյունքում առաջացած աղային կուտակումները Ապրանքի ներքին մակերեսներին առաջացրել են տեխնիկական խնդիրները,
2. ձմռան ամիսներին Պատվիրատուի կողմից չի միացվել արտաքին խողովակների հակասառեցնող լարը, որի հետևանքով խափանվել և/կամ խաթարվել է Ապրանքի աշխատանքը,
3. ֆիզիկական ուժի ներգործությամբ Ապրանքի վրա առաջացել է արտաքին մեխանիկական վնասվածք, որը հանգեցրել է համակարգի աշխատանքի խաթարմանը,
4. հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետ, Ապրանքի աշխատանքի թերությունների համար Մատակարարը պատասխանատվություն չի կրում, եթե թերությունները ծագել են Պատվիրատուի կողմից աշխատանքի արդյունքն ընդունելուց հետո՝ Պատվիրատուի կողմից աշխատանքի արդյունքն օգտագործելու կամ պահպանելու կանոնները խախտելու կամ երրորդ անձանց գործողությունների կամ անհաղթահարելի ուժի հետևանքով.
   - հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո առաջացել են ապրանքի աշխատանքի վրա ուղղակի կամ անուղղակի կերպով ազդող գործոն՝ ստվեր, որոնք մինչ ապրանքի մատակարարումը առկա չեն եղել,
   - հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո ուղղակի կամ անուղղակի կերպով փոփոխվել է տանիքի կառուցվածքը, որի հետևանքով Ապրանքը ֆիզիկապես վնասվել է կամ տեղի է ունեցել Ապրանքի աշխատանքի արդյունավետության անկում,

- հեռացվել և/կամ խեղվել է որևէ հանգույց, միավոր կամ մաս, որը տեղադրված է եղել Մատակարարի կողմից,
- տեղի է ունեցել միջամտություն Ապրանքի որևէ մասի վրա, մասնավորապես՝ ներկում և/կամ դրան (կամ դրա համակցման դետալներին) ամրացում, հենում որևէ առարկա և/կամ պիտակ՝ առանց Մատակարարի հետ համաձայնեցման,

5. երբ տեղի է ունեցել Ապրանքի շահագործման կանոնների խախտում,
6. հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո ուղղակի կամ անուղղակի կերպով փոփոխվել է տանիքի կառուցվածքը, որի պատճառով Ապրանքի վնասման հետևանքով առաջացել է այլ նյութական վնասներ, որը մատակարարի կողմից ենթակա չէ փոխհատուցման,
7. բաշխից ցանցերում էլեկտրականության տատանումների կամ բարձր լարման պատճառով խափանվում է Ապրանքի էլեկտրական բաղադրիչները,
8. կառավարման վահանակի (Ապրանքի թվային կարգավորիչի) վրա հեղուկի կամ խոնավության ազդեցության հետևանքով վերջինս խափանվել է,
9. Պատվիրատուն ինքնուրույն՝ առանց Մատակարարին տեղյակ պահելու և/կամ ցուցումներ ստանալու, իրականացրել է Ապրանք տեղադիրքի փոփոխություն և/կամ այլ գործողությունների միջոցով ազդել է Ապրանքի արդյունավետ աշխատանքի վրա, որի արդյունքում տեղի է ունեցել Ապրանքի մասնակի կամ ամբողջական վնասում,
10. Ապրանքը շահագործվել է առանց բավարար քանակի ջրի առկայության, որի հետևանքով Ապրանքի կոլբաները կորցրել են արևի էներգիայի կլանման հատկությունները՝ նվազեցնելով Ապրանքի աշխատանքի արդյունավետությունը:
11. Ապրանքի հանձնում-ընդունումն իրականացնելուց հետո, դրա աշխատանքի թերությունների համար Մատակարարը պատասխանատվություն չի կրում, եթե թերությունները ծագել են անհաղթահարելի ուժի (ֆորս մաժորի) հետևանքով: Առաջացած վնասվածքները ներառում են, բայց չեն սահմանափակվում. պատերազմի, բնական աղետների (երկրաշարժ, ջրհեղեղ, կայծակնահարություն, կարկտահարություն, փոթորիկներ, հրաբխի ժայթքում և այլն), տեխնոգեն աղբյուրներից շանթահարման, ոչ պատշաճ լարման հզորության ճեղքվածքների, հրդեհի, վանդալիզմի, կեղծարարության և (կամ) անհաղթահարելի այլ ուժի հետևանքով առաջացած վնասվածքները:

ԻՐԱԶԵԿՈՒՄ

- Ապրանքի կողմից ապահովվող տաք ջրի ջերմաստիճանն ուղղակիորեն կապված է եղանակային պայմանների հետ և արևի ճառագայթման ոչ բավարար ինտենսիվության պարագայում տաքացվող ջրի ջերմաստիճանը կարող է բավարար չլինել այն կենցաղում նպատակային օգտագործման համար: Ինչի համար խորհուրդ է տրվում միացնել համակարգում առկա էլեկտրական տաքացուցիչը, որի օգտագործման պարագայում տեղի է ունենում էլեկտրաէներգիայի համապատասխան քանակի սպառում:
- Ապրանքի տաք ջրի ապահովման գլխավոր էներգիայի աղբյուրը արևն է, կարող է լինել շեղումներ ջրի ջերմաստիճանի միջին ցուցանիշներից, կախված ընտանիքի անդամների թվից, տաք ջրի սպառման, արև ճառագայթման ինտենսիվության և շահագործման ձևից:
- Ապրանքը ոչ ճնշումային արևային ջրատաքացուցիչ համակարգ է և տաք ջրի ճնշումը կախված է տանիքի բարձրությունից, խողովակների երկարությունից, լոգարանի ցնցուղից և այլ հանգամանքներից և հաճախ համակարգի ճնշումն ավելի ցածր է լինում քան ճնշումային պոմպից

կամ ջրմուղի ցանցից եկող սառը ջրի ճնշումը: Տաք ջրի բարձր ճնշում ապահովելու համար հարկավոր է կիրառել լրացուցիչ տաք ջրի պոմպ:

- Ապրանքի շահագործման ժամանակահատվածի ընթացքում տանիքի վերանորոգման անհրաժեշտություն առաջանալու դեպքում Մատակարարը պարտավոր չէ անվճար ապամոնտաժել, ապա տանիքի վերանորոգումից հետո մոնտաժել Ապրանքը:
- Ապրանքի արդյունավետությունը տարիների շահագործման ընթացքում կարող է նվազել, ինչը սակայն չի վկայում Ապրանքի ոչ բավարար որակի և/կամ տեխնիկական խնդրի առկայության մասին:
- Ապրանքի անվտանգ և արդյունավետ շահագործման կանոններին ծանոթանալը, տիրապետելը, հետևելն ու կիրառելը հաճախորդի պարտականությունն է:
- Ապրանքի տեխնիկական բնութագիր և/կամ շահագործման արդյունավետության չափանիշ չի կարող հանդիսանալ հաճախորդի հարևանի, բարեկամի, ծանոթի և/կամ այլնի համեմատական փորձառությունը: Այդպիսին կարող է հանդիսանալ միայն մասնագիտացված ու անաչառ գնահատականը և տեխնիկական չափումները:
- Հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո Ապրանքը համարվում է հաճախորդի սեփականությունը և հաճախորդի պահանջով Ապրանքի ապամոնտաժումը, տեղափոխումը և այլ վայրում մոնտաժումը ընկերությունը պարտավոր չէ կատարել անվճար հիմունքներով:
- Ցանկացած այլ խնդիր, որը կարող է առաջանալ և նշված չէ հավելվածում, կենթարկվի մասնագիտական անաչառ գնահատման, ընկերության կողմից կտրվի եզրակացություն, որից հետո կիրականացվի խնդրի լուծման որոշում՝ երկու կողմերի համատեղ համաձայնեցմամբ:
- «Շտիգեն» ընկերությունը խստագույնս հետամուտ է լինելու իր բարի համբավի և անվան հետ կապված վարկաբեկման փաստերի հեղինակներին օրենքի սահմաններում իրավական պատիժ սահմանելուն: